ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
Նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս, հրաւէրովը Մոսկուայի և Համայն Ռուսաստանի Տ. Ալեքսի Սրբազան Պատրիարքի, 1968 թ. Դեկտեմբերի 21-ին, Զագորսկի ռուսական եկեղեցու մայրավանքում, մասնակցեց միջեկեղեցական ժողովին, որի օրակարգն էր՝ եկեղեցական մի համագումարի հրաւիրումը, քննելու համար աստուածային պատգամների լոյսի ներքոյ, աշխարհում խաղաղութիւնը ամրապնդելու գործում՝ եկեղեցիների եւ այլ կրօնական դաւանութեանց մասնակցութեան հարցը:

Սոյն խորհրդակցական ժողովին ներկայ էին խորհրդային Միութեան մէջ քրիստոնէական բոլոր եկեղեցիները, ինչպէս նաև՝ մահմեդական, մովսիսական եւ բուդդայական դաւանութիւնները:

Ժողովում միաձայնութեամբ որոշուեց վերոյիշեալ օրակարգով կրօնական համագումար հրաւիրել 1969 թուականի Յուլիսի 1 – 4 օրերին, Զագորսկի մայրավանքում, մասնակցութեամբ խորհրդային Միութեան մէջ բոլոր եկեղեցիների եւ կրօնական դաւանութեանց, ինչպէս նաեւ արտասահմանից հրաւիրուած կրօնական-եկեղեցական ներկայացուցիչների:

ԴԻՒԱՆ ՄԱՑՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
Յունվար 1969

digitised by A.R.A.R.@